ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-9-6-Ա

ք. Երևան 24.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի նոյեմբերի 24-ի նիստում քննարկեց 2025 թվականի մայիսի 15-ին Էլլա Հակոբյանի կողմից ներկայացված «Դիջիթեյն» ՍՊԸ ընկերության (Երևան, Ծ. Իսակովի պող., 15/3, AM) «BETINA» (No20240805) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111–րդ մասի 14–րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «BETINIA» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է https://betinia.com/en/, https://play.google.com/store/apps/details?id=com.romixltd.betinia&hl=en, https://betinia.se/en/ և https://betiniacasino.dk/ինտերնետային կայքերում, և որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի

գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «BETINIA» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է https://betinia.com/en/, https://play.google.com/store/apps/details?id=com.romixltd.betinia&hl=en, https://betinia.se/en/ և https://betiniacasino.dk/ ինտերնետային կայքերում, և որոնց մասին հայտատուն կարող էր իմանալ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը պատշաճ ծանուցվել էր և չէր ներկայացել նիստին:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Էլլա Հակոբյանի կողմից ներկայացված «Դիջիթեյն» ՍՊԸ ընկերության «BETINA» (No20240805) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ